

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկ. ՄՍԹ ԳԱ րղրակից-անդամ է. Բ. ԱՂԱՅԱՆ

Որևէ այբուբենի ստեղծման համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել՝ գրության ուղղությունը, որ ինքնին պայմանավորում է նաև այբուբենի մի քանի ուրիշ առանձնահատկությունները։ Ինչպես գիտենք, ըստ գրության ուղղության այբուբենները լինում են աջընթաց (ձախից դեպի աջ գրություն), ձախընթաց (աջից դեպի ձախ գրություն) և վայրընթաց (վերևից դեպի ներքև գրություն)¹։ Մեսրոպ Մաշտոցին ծանոթ և նրա օգտագործած երեք հիմնական այբուբեններից երկուսը՝ պահլավերենն ու ասորերենը ձախընթաց գրություն ունեին, իսկ մեկը՝ հունարենը, աջընթաց։ Մեսրոպն ընտրեց աջակողմյան գրությունը, որ ինչպես հայտնի է գրի ընդհանուր պատմությունից ու տեսությունից, առավել հարմարն է և ներկայացնում է գրի վարդապետական ամենաբարձր աստիճանը։ Ոմանք Մեսրոպի այս ընտրությունն ուզում են բացատրել այն բանով միայն, որ նա առավել չափով հակված էր դեպի հունական քաղաքակրթությունը, բայց դա միակողմանի բացատրություն է։ Առանց հունական օրինակադիպի նշանակությունը միտելու, մենք գտնում ենք, այնուամենայնիվ, որ այդ ընտրության մեջ Մեսրոպի համար որոշիչ դեր է խաղացել մի այլ հանգամանք՝ գրի սիստեմը։

Հայտնի է, որ այբուբենի մի մասն ունի գրության այսպես կոչված կցողակա՝ կաճ սխեմում, իսկ մյուս մասը՝ անջատակա՛ն։ Մեսրոպի օգտագործած երեք այբուբեններից երկուսը՝ ասորերենն ու պահլավերենն ունեին կցողական, իսկ հունարենը՝ անջատական սխեմում։ Կցողական գրի անհարմարությունն այն է, որ յուրաքանչյուր տառ, կամ զոնե տառերի մեծագույն մասը, ունի չորս ձև՝ ամեն մեկը մի դիրքի համար (առանձին, բառասկզբում, բառամիջում, բառավերջում)։ Օրինակ, արարերենը, որ նույնպես կցողական սխեման է ներկայացնում, տառերի մեծագույն մասի համար ունի չորսական և նույնիսկ հինգական ձև. այսպես՝ Լ-ի համար ունի 5 առանձին գրության, 3 հաջորդ տառին կցվելու, 2 նախորդ և հաջորդ տառերին կցվելու, 1 նախորդ տառին կցվելու համար և, վերջապես, ալիֆ տառի հետ միացած էլ՝ Վ, այդպես և շատ ուրիշ տառեր։ Մեսրոպը, որ շատ լավ կարողացել էր գնահատել իրեն ծանոթ այբուբենների առավելություններն ու թերությունները, անշուշտ չէր կարող անուշադրության մատնել այս հանգամանքը։ Բայց տվյալ դեպքում անջատական ու կցողական սխեմաները զուգահեռաբար էին նաև գրության ուղղությանը. պահլավերենն ու ասորերենը, որ ունեին ձախընթաց գրություն, ներկայացնում էին կցողական սխեմամբ, իսկ հունարենը, որ աջընթաց գրություն ուներ, ան-

¹ Ավելի մանրամասն տե՛ս Հ. Ա. Ճ ա ո յ ա ն, Հայոց գրերը, Վիեննա, 1928։

ջատական սխտեմն էր ներկայացնում: Մեսրոպի համար, ուրեմն, գրության ուղղությունն ու սխտեմնը սերտորեն կապված էին իրար հետ, և մեկի րնտրությամբ պայմանավորված էր նաև մյուսը: Այս էր, ահա, գլխավոր պատճառը աջընթաց ուղղությունն րնտրելու, որով լուծում էր նաև գրության սխտեմնի հարցը: Մեսրոպյան այբուբենի երկու առավելություններն են, այսպիսով, աջընթաց և անջատական գրությունը:

Այդ երկու առավելությունների հետ սերտորեն կապվում էր նաև երրորդը, ըստ որում այստեղ էլ նա ակնհայտորեն տեսնում էր հունական գրի գերազանցությունը: Ասորական ու պահլավական գրի մեջ ձայնավորները իբրև կանոն չէին գրվում, իսկ հունարենում գրվում էին: Մեսրոպն անշուշտ փորձից գիտեր, թե ինչ դժվարությունների, իսկ հաճախ էլ՝ թյուրիմացությունների տեղիք է տալիս ձայնավորները չգրելը, և ինքն էլ տառեր հորինեց նաև ձայնավորների համար: Դրանով նա ունեցավ մի այբուբեն, որն ընդգրկում էր հայերենի բոլոր հնչյուններն անխտիր, թե՛ բաղաձայնները, թե՛ ձայնավորները, և չկա հին հայերենի որևէ հնչյուն (այժմյան լեզվաբանական տերմինով՝ հնչույթ), որ իր գրային նշանը չունենա մեսրոպյան այբուբենում:

Այս երեք կետերում, ինչպես տեսնում ենք, Մեսրոպը լավագույն րնտրությունն է կատարել օգտագործած այբուբենների սկզբունքների մեջ և հետևել հունարենին, որ այդ երեք տեսակետներից գերազանցում էր մյուսներին: Այստեղ կար առավել կատարյալ օրինակը, որին նա կարող էր հետևել, թեև դարձյալ խորապես դնահատելով իր ձեռքի տակ եղած այբուբենների սկզբունքները: Բայց մեսրոպյան այբուբենն ունի նաև այնպիսի առավելություններ, որոնցից դուրկ էին իր օգտագործած այբուբենները: Այդ առավելությունները կարելի է ամփոփել հետևյալ երեք կետերում:

1. Մեսրոպին ծանոթ այբուբենները այն թերությունն ունեին, որ հաճախ միևնույն տառը տարբեր պայմաններում տարբեր էլ հնչյուններ էր արտահայտում, ինչպես և՛ միևնույն հնչյունը երբեմն տարբեր տառերով էր արտահայտվում: Այս թերությունից դերժ չէին նույնիսկ հունարենն ու լատիներենը. վերջինս, որ իր դարաշրջանի ամենակատարյալ այբուբենը կարելի է համարել, Մեսրոպի ժամանակ այդ տեսակետից խոցելի էր արդեն. օրինակ, *Ϸ* տառը առաջնային շարքի ձայնավորներից առաջ կարդացվում էր *ց*, իսկ ետին շարքի ձայնավորներից առաջ և բոլոր մյուս դեպքերում՝ *կ*, *ֆ* հնչյունի համար օգտագործվում էր *Ϸ* տառը՝ լատինական բառերում և քի կապակցությունը՝ հունական փոխառությունների մեջ: Մեսրոպը, րնտրելով մեկ հնչյունին մեկ տառ և մեկ տառին՝ մեկ հնչյուն սկզբունքը, խուսափեց այդ թերությունից և ստեղծեց մի այբուբեն, որ լիովին արտացոլում էր հին հայերենի բոլոր հնչյունները մեկական տառով: Միաժամանակ, նա խուսափեց նաև տառակապակցություններից, իբրև սկզբունք ընդունելով ամեն մի հնչյունի համար մեկ տառանիշ հորինելը: Այս տեսակետից միակ բացառությունն է կազմում ուն, որ բաղկացած է երկու տառանիշից (*Ո*, *Ի*), բայց այդ էլ, անշուշտ, ո՛չ պատահական բացառություն կարելի է համարել, ո՛չ էլ հունարենի կույր հետևողություն: Հունարենում ու հնչյունն ուներ երկտառ նշան (*ου*). ըստ որում հունական իպսիլիոն տառը (*υ*) առանձին կարդացվում էր *ու* (առաջնային շարքի ու). այդ տառին համապատասխանում է մեսրոպյան այբուբենի *ւ*-ն: Մեր հին ձեռագրերի տվյալներից գիտենք արդեն, որ այդ *Ի*-ը հաճախ փոխարինում է իւ երկբարբառին: Միանգամայն հավանական է, որ որոշ խոսվածքներում իւ

երկրարբառն արտասանվել է իբրև ու, հունարեն իպսիլիոնի նման, ինչպես ունենք արդի բարբառներից շատերում (հմմտ. ձուն, սուն, տրուն ևն)։ Այս զուգադիպությունը հունարենի հետ ստիպել է Մեսրոպին վերցնել ու հնչյունի համար հունական երկնիչ դրությունը։

2. Հին այբուբեններից շատերը, այդ թվում և հունարենը, ունեին զանազան կարգի նշաններ, որոնք գործածվում էին տառերի ճիշտ արտասանությունը ցույց տալու համար։ Դրանք տառերի տակ դրվող կետեր էին, տառերի վրա դրվող եռանկյունաձև նշաններ, շեշտի զանազան տեսակներ և այլն, որոնք երբեմն տառին նոր հնչում էին տալիս կամ նույնիսկ ինքնին առանձին հնչյունի նշանի դեր կատարում։ այդպիսին էր, օրինակ, հունարենի spiritus asper-ը։ Մեսրոպն իբրև սկզբունք ընդունեց շունենալ այդպիսի նշաններ, և իր հորինած դրի մեջ ոչ մի այդպիսի նշան չենք գտնում։ Իսկ սա նշանակում է, թե մեսրոպյան այբուբենը ինքնին արդեն լիովին արտահայտում էր հայերենի բոլոր արտասանական առանձնահատկություններն առանց լրացուցիչ նշանների։

3. Հեզվի պատմությունից դիտենք, որ գրերի ստեղծման ժամանակ Հայաստանի բոլոր զավառներում բացարձակապես միատեսակ հայերենով չէին խոսում։ Եւ վերաբերում է առավելապես հնչյուններին. պետք է ենթադրենք, որ զանազան զավառների խոսվածքներում կային արտասանական ինչ-ինչ տարբերություններ։ Մեսրոպյան այբուբենը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, արտահայտում է հինգերորդ դարի ոչ թե խոսվածքներից որևէ մեկի, այլ ընդհանուր հայերենի հնչյունական համակարգը։ Ըր կյանքում, մինչև գրերի գյուտը, Մեսրոպը եղել էր Հայաստանի մի շարք զավառներում. նա ծնվել էր Տարոնի Հացեկաց գյուղում, կրթություն ստացել, հայագետների ենթադրությամբ՝ Անտիոքում, աշխատել Վաղարշապատում, որպես ատենադպիր, ապա՝ զինվորական, իսկ հետո էլ, հրաժարվելով աշխարհիկ ծառայությունից, հոգևոր կոչում ընդունել և, վերջապես, քարոզչական գործունեության ձեռնարկել Գողթն զավառում։ Այս բոլորը նրան հնարավորություն են տվել լավ ծանոթանալու տարբեր զավառների հայերենին և լրիվ պատկերացում կազմելու հնչյունական այն համակարգի մասին, որ ընդհանուր հայերենն ուներ։ Հենց սրանով է բացատրվում այն փաստը, որ մեսրոպյան այբուբենն արտահայտում է ոչ թե հնչյունական տարբերակներ, այլ նրանց ընդհանրությունները՝ հնչյութները, իսկ սա նշանակում է, թե այդ այբուբենը, ժամանակակից տերմինով ասած, հնչյութաբանական այբուբեն է։

Այս ամենը, ահա, այն հատկանիշներն են, որոնք բնորոշում են մեսրոպյան գրի կատարելությունը։ Մեսրոպը ձեռնամուխ է եղել իր գործին հայերենի խորահմուտ ուսումնասիրությունից և իրեն ծանոթ այբուբենների բազմակողմանի քննությունից հետո։ Եւ նրան հնարավորություն է տվել ոչ միայն լիակատար պատկերացում կազմելու հայերենի հնչյունական համակարգի բոլոր առանձնահատկությունների մասին ու դրանք լիովին հաշվի առնելու այբուբենի ստեղծման ժամանակ, այլև գտնելու իրեն ծանոթ այբուբեններից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները և խուսափելու այդ թերություններից։ Կա, սակայն, մի բան, որ Մեսրոպի ամբողջ գործունեության հիմքն է կազմում. դա այն գլխավոր սկզբունքն է, որով նա առաջնորդվել է հայ գրերն ստեղծելու գործում, այն յուրահատուկ նպատակը, որին ձգտել է։ Ցավոք սրտի, այդ բանի վրա հայագիտության մեջ թիչ են ուշադրություն

դարձրել: Իրոք, ի՞նչ նպատակ է ունեցել Մեսրոպը: Արդյոք հայերենի համար գիր ստեղծելը միայն: Ո՛չ: Մեսրոպն իր առջև նպատակ էր դրել ստեղծել հայկական գիր և առաջնորդվել է մեկ գլխավոր սկզբունքով՝ հուրինել ինքնատիպ, միայն հայերենին հատուկ գրեր: Պարզաբանենք մեր միտքը ծանոթ օրինակներով: Ժամանակակից եվրոպական լեզուները գրեթե բոլորն էլ օգտագործում են լատինական այբուբենը: Այդ լեզուներից յուրաքանչյուրս ունի, իհարկե, իր հնչյունական համակարգը, որ զգալիորեն տարբերվում է հին լատիններենի հնչյունական համակարգից: Եվ շնայած դրան, նրանց համար օգտագործվում է լատիններենի համար ստեղծված այբուբենն առանց փոփոխության. նույնիսկ այն հնչյունների համար, որոնք լատիններենում չեն եղել, ոչ թե նոր տառեր են հորինվել, այլ լատիններենի զանազան տառերի կապակցություններն են օգտագործվում: Այսպես, օրինակ, ֆրանսերենն ունի շ հնչյունը, որ լատիններենում չկար, և այդ հնչյունի համար օգտագործվում է լատինական *c* և *h* տառերի կապակցությունը (*ch*). գերմաներենը նույն տառակապակցությունն օգտագործում է իս հնչյունի համար, իսկ շ հնչյունն արտահայտում է երեք տառերի կապակցությամբ (*sch*) և այլն: Այս դեպքում, ուրեմն, ուղղակի վերցված է լատինական այբուբենը և հարմարեցված այդ լեզուներին: Ժամանակակից ֆրանսերենն ունի իր այբուբենն, իհարկե, բայց դա ոչ թե ֆրանսիական այբուբեն է, այլ լատինական: Այդպես էլ գերմաներենի, անգլերենի, իսպաներենի և շատ ուրիշ լեզուների այբուբենները: Մեսրոպն էլ, ձեռնարկելով հայերենի համար գիր ստեղծելու գործին, կարող էր, անշուշտ, վերցնել իրեն ծանոթ այբուբեններից մեկը, օրինակ՝ հունարենը և հարմարեցնել հայերենին որոշ տառակապակցություններ ու նշաններ ավելացնելով: Բայց նա այդպես չի վարվել. նա ստեղծել է հայկական այբուբեն, մի այբուբեն, որ խորապես տարբեր է իր ժամանակի (և հետագայի) բոլոր այբուբեններից և միանգամայն ինքնատիպ: Տեսնենք, ուրեմն, թե որոնք են այն հատկանիշները, որ հայկական գրերին այդ ինքնատիպությունն են տալիս: Վերը հիշած առանձնահատկությունները, որոնք հայկական գրի առավելությունների ու, հետևաբար, կատարելության մասին են վկայում, չեն կարող, իհարկե, դիտվել որպես ինքնատիպության հատկանիշներ, բայց որում նրանցից յուրաքանչյուրը այն կամ այն լեզվին էլ հատուկ էր: Այսպես, օրինակ, աջընթաց գրություն ունին նաև հունարենը, լատիններենը և այլ լեզուներ, ձայնավորներ ունենին հունարենն ու լատիններենը և այլն: Հայկական գրի ինքնատիպության տեսակետից կարեւորը տառերի ձևն ու այբուբենի մեջ նրանց դասավորության կարգն է, և այստեղ էլ հենց, Մեսրոպը գրեւորել է իր հանձարը: Հայտնի է, որ հայկական գրերն ստեղծելու համար Մեսրոպն օգտագործել է հիմնականում հունական, ասորական և իրանական (հատկապես պահլավական) այբուբենները. բայց դրանք նրան ծառայել են որպես ելակետ կամ նախատիպար: Սկսած ունենալով դրանք և վերցնելով դրանցից զանազան տառեր, նա այնպես է փոխել այդ տառերը, որ հնագրական (պալեոգրաֆիկ) բազմաթիվ հետազոտություններն անգամ դեռևս վերջնականապես չեն կարողացել որոշել մի շարք տառերի նախատիպարները: Նույնիսկ մեր այբուբենի առաջին տառը (Ա) այնքան ինքնօրինակ է, որ թեև շատերը կապում են հունարեն ալֆայի հետ, դարձյալ իրավացի կասկածներ է հարուցում այդ կարծիքի մասին: Իսկ սա նշանակում է, թե մեսրոպյան գրի ինքնատիպությունը բնորոշվում է տառերի այն յուրահատուկ ձևերով, որոնցով նրանք միանգամայն հեռանում են իրենց նախատիպարներից:

րից: Սակայն տառերի ձևափոխությունների մեջ էլ Մեսրոպը շատ որոշակի սկզբունք է ունեցել: Իր ընտրած նախատիպարները Մեսրոպը կարող էր փոփոխել առանց որևէ սխտեմի, խառնիխուռն կերպով: Այսպես, օրինակ, ենթադրենք, թե մենք ուզում ենք մեր Ա և Ս տառերը ձևափոխելով նոր տառեր հորինել. մենք կարող ենք, ասենք թե, Ա-ի ձախ սյունը կարճացնել, իսկ Ս-ի՝ աջ սյունը, կամ Ա-ի մեկ սյունը կարճացնել, իսկ Ս-ն պառկեցնել տողի վրա և այլն, բայց կարող ենք նաև երկուսն էլ միատեսակ կերպով ձևափոխել, օրինակ՝ երկուսի էլ աջ սյունը կարճացնել կամ երկուսն էլ պառկեցնել տողի վրա միևնույն ուղղությամբ և այլն: Առաջին դեպքում մեր ձևափոխությունները ոչ մի սկզբունքի վրա հիմնված չեն լինի և ոչ մի սխտեմ չեն ներկայացնի, իսկ երկրորդ դեպքում կունենանք և սկզբունք, և միասնական սխտեմ, այն է՝ միատեսակ տառերը միատեսակ էլ ձևափոխությունների ենթարկել: Հայկական այբուբենի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մեսրոպն էլ իր ունեցած նախատիպարները ձևափոխությունների է ենթարկել որոշակի սկզբունքով, և դրա շնորհիվ էլ միատեսակ տառերը մի որոշ սխտեմ են ներկայացնում թե իրենց ձևափոխություններով, և թե դրանց արդյունքով, այսինքն՝ իրենց ստացած ձևով: Ուսումնասիրելով մեսրոպյան տառերը մենք կարողացանք պարզել հայերեն գրերի ձևավորման կամ, որ նույնն է, նախատիպարների ձևափոխությունների հետևյալ սկզբունքները. ա) բացել է նախատիպարների շրջանակները (օր. Ո, Ս). բ) Վորակներ (շրջանակներ) պահել է այն դեպքում միայն, եթե դրանց ավելացրել է թևեր վերևից, ներքևից կամ միջից (օր. Ձ, Գ). գ) Ուղղահայաց գծերը միացրել է կոր գծիկով և ոչ մի դեպքում չի դիմել ուղիղ գծիկի օգնությանը. դ) Տառերի հիմնական գծերին վերևից, ներքևից կամ միջից կցված աջակողմյան թևիկներն անխտիր վերջավորել է ղեպից ցած հակված ելունով, իսկ ձախակողմյան թևիկները՝ սուր կամ բութ ծայրով (օր. է, ի, Մ, Ծ, Ջ). ե) Ոչ մի տառի ձևում եռանկյունի չի պահպանել, մի բան, որ հատուկ էր հունական տառերին. զ) Բոլոր սյունաղծերը ուղիղ են, առանց կորության կամ թեքության (օր. Ս, Ի, Լ): Այս սկզբունքների դործադրությունը ցույց տալու համար իբրև օրինակ առնենք մեսրոպյան այբուբենի մի քանի տառեր. է՝ տառի նախատիպն է հունարեն Ն. առաջին րսկրգրության համաձայն բացված են շրջանակները Ն և շորորդ սկզբունքի համաձայն ցածի մասը փոխարինել է միջին թևով: Թ՝ տառը կազմել է հունարեն ն-ից. առաջին սկզբունքով բացել է շրջանակը (Պ), երրորդ սկզբունքով՝ միջի ուղիղ գիծը կորացրել (Մ), երկրորդ սկզբունքով՝ շրջանակին թևիկ ավելացրել (Պ) և շորորդ սկզբունքի համաձայն՝ ղեպի վայր հակված ելունով ավարտել (Պ): Այդպես է վարվել նաև բոլոր մյուս ղեպերում, որով և ստացվել է ձևափոխությունների ու ստացված տառաձևերի սխտեմայնությունը, իսկ սա հայկական այբուբենի այն կարևորագույն յուրահատկություններից մեկն է, որ ինքնատիպ բնույթ է տվել նրան: Պետք է նշել, որ նույնպիսի սխտեմայնություն նկատելի է նաև վրացական ու ադվանական գրերի մեջ:

Այժմ, ելնելով մեր նշած սկզբունքներից, փորձենք որոշել, թե մեսրոպյան այբուբենի որ տառը որ այբուբենի (հունական, ասորական ևն) համապատասխան տառից է ձևավորվել: Այսպիսի մի մանրակրկիտ աշխատանք կատարել է մեծավաստակ հայագետ Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ. քննության առնելով հայերեն տառերի նախատիպարների մասին արտա-

հայտնված բոլոր կարծիքները, նա իր եզրակացությունն է հայտնում ամեն մի տառի ծագման մասին²։ Իր քննություններից ելնելով, Հ. Աճառյանը գտնում է, որ 16 տառ (Բ, Գ, Դ, Ե, Ջ, Է, Թ, Ի, Մ, Ո, Պ, Ս, Ր, Ի, Փ, Ք) վերցված են հունարենից, 9 տառ (Ժ, Հ, Յ, Շ, Ծ, Ղ, Ջ, Վ, Տ)՝ իրանականից, մեկը (Ս)՝ ասորականից, երկուսը՝ (Ա, Ծ)՝ իր հորինած հայերեն տառերից, մնացյալ տառերի խնդրում անորոշ դիրք է բռնում, հնարավոր համարելով կապել և՛ հունական, և՛ ասորական, կամ և՛ հունական, և՛ իրանական նախատիպարների հետ։ Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը իր «Հայկական պալեոգրաֆիա»³ իսկ այնուհետև «Հայ գրի և գրչության պատմություն» աշխատությունների³ մեջ այն կարծիքն է հայտնում, թե «Դանիել Ասորին հունական այբուբենից վերցրել է հետևյալ 24 տառերը. ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ի, լ, կ, մ, յ, ն, շ, ո, պ, ռ, ս, վ, տ, լ, փ. ք»⁴, իսկ Մեսրոպը, վերցնելով այդ պատրաստի տառերը, ավելացրել է 12 տառ հունարենում չեղած հնչյունների համար (բ, ց, խ, ծ, հ, ձ, ղ, ւ, չ, ջ, ո, ց)՝ Համեմատելով այս երկու հեղինակների տախտակները, մենք գալիս ենք հետևյալ եզրակացության. օգտագործելով մի շարք այբուբեններ, Մեսրոպը, այնուամենայնիվ, առավելությունը տվել է հունադենին, բայց և այնպես միշտ էլ նկատի է ունեցել նաև մյուս այբուբենները և համադրելով համապատասխան տառերը, ստեղծել մի նոր տառածև, որ յլևև առավել կամ նվազ չափով նման է այս կամ այն այբուբենի համապատասխան տառին, բայց ուղղակիորեն չի նույնանում նրա հետ։ Այս տեսանկյունով քննության առնելով հիշյալ երկու կարծիքները, մենք գտնում ենք, որ առավելապես հունական նախատիպարների հետ են կապված հետևյալ 15 տառերը. Բ, Գ, Դ, Ե, Թ, Ի, Մ, Ո, Պ, Ս, Ր, Ի, Փ, Ք։ Այս տառերից շատերն էլ, սակայն, միաժամանակ ունեն նաև ինչ-ինչ նմանություններ պահլավական, ասորական կամ սասանյան այբուբենների հետ. օրինակ, Ս տառը նույնքան մոտ է հունական շ-ին (փոխված դիրքով), որքան և պահլավականին, բայց և երկուսից էլ հավասարապես տարբեր է, քան որում երկու սյունագծերն էլ ուղիղ են դարձել, և վերացվել է պահլավերենի ձախակողմյան թևիկը։ Քանի որ այդ 15 տառերի հարցում Հ. Աճառյանը և Ա. Աբրահամյանն էլ միմյանց համաձայն են, ապա դրանց վրա կանգ չենք առնի և կխոսենք մնացյալ տառերի մասին։

Ա տառը Աճառյանը կապում է հունական ալֆաբի և պահլավական համապատասխան տառի հետ և ճիշտ է վարվում, որովհետև հավասարապես նման է երկուսին և հավասարապես էլ տարբեր։

Բ-ն քստ Աճառյանի կազմված է հունական դելտայից, քստ Աբրահամյանի՝ հայերեն գ-ից. երկրորդն ավելի հավանական է։

Ա-ն Մեսրոպը կազմել է իր հորինած Վ տառից, միջի թևը բարձրացնելով։ Այս կետում համաձայն են երկու հեղինակներն էլ։

Ժ-ն, ինչպես ցույց ենք տվել մենք, կազմվել է Թ-ից, ձախ կեսը կտրելով. այսպես է բնորոշում նաև Ա. Աբրահամյանը։

2 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 198—271։

3 Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1948, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959։

4 Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 61։

Լ-ն Հ. Աճառյանը հիշյալ գրքի մեջ կապում է հայերեն Ղ-ի կամ սասանյան Լ-ի հետ, սակայն 1944 թ., մեզ հայտնեց, որ Մեսրոպը դա կազմել է իր հորինած Բ-ից՝ միջի թևը ցած տանելով⁵:

Խ-ն ըստ Աճառյանի՝ կազմված է դարձյալ Ի-ից. այդպես և ըստ Աբրահամյանի:

Ծ-ն ըստ Աճառյանի՝ ասորականից, ըստ Ա. Աբրահամյանի՝ հայերեն ծ-ից: Ավելի հավանական է առաջինը, որից հեշտությամբ կարելի է ստանալ մեսրոպյան ծ տառը՝ ցածի մասը շրջանակ սարքելով և աջից թևիկ ավելացնելով. հայերեն ս-ից կազմված լինելու դեպքում պետք է այբուբենի մեջ էլ նրանից հետո լիներ, համաձայն Մեսրոպի կիրառած սկզբունքի (տե՛ս ստորև):

Կ-ն Հ. Աճառյանի կարծիքով տատանվում է հունարեն, ասորերեն և սասանյան Կ հնչյունը ներկայացնող տառերի միջև. Գարդտհաուզենը, Մեննիշյանը, Սարգսյանը, Ինչպես և Ա. Աբրահամյանը կապում են միայն հունականի հետ. իսկ Մարկվարտը հունականի հետ հիշում է նաև ասորականը: Ելնելով վերը հայտնած մեր դրույթից, ընդունելի ենք համարում Աճառյանի և Մարկվարտի կարծիքը. Մեսրոպը նկատի է ունեցել հիշված երեք տառերն էլ և կազմել է միջին մի ձև:

Հ-ն ըստ Աճառյանի՝ պահլավականից, ըստ Ա. Աբրահամյանի՝ կազմված է հայերեն Կ-ից, որի հետ սակայն ոչ մի նմանություն չունի: Ընդունելի է առաջինը:

Ձ-ն ըստ Աճառյանի՝ կազմված է հայկական Ծ-ից ասորականի մի այլ ձևափոխությամբ, ըստ Ա. Աբրահամյանի՝ հայկական Զ-ից: Երկուսն էլ շարակուսելի են, թեև Աճառյանի բացատրությունը ավելի հավանական է թվում:

Ղ-ն ըստ Աճառյանի՝ հունական լ-ից, որի հին ձևը շատ նման է մերին. Աբրահամյանը կապում է հայկական Լ-ի հետ, որ ընդունելի չէ:

Ծ-ն Աճառյանը կապում է պահլավական (նաև սասանյան շրջանի) ծ-ին, Ա. Աբրահամյանը՝ հունարեն դելտային. թեև վերջինիս հետ հայերեն ծ-ն նրմանություն ունի, բայց հնչման ոչ մի ընդհանրություն չկա. այբուբենի մեջ դրաված տեղն էլ բացառում է այդ:

Յ-ն Աճառյանի կարծիքով ստացվել է երկու՝ իրար վրա դրված պահլավական Ե-ից: Ա. Աբրահամյանը հանում է հունական օ-ից. ընդունելի է առաջինը:

Ն-ն ըստ Աճառյանի՝ տատանվում է հունականի և սասանյանի միջև, ըստ Ա. Աբրահամյանի հունական Ն-ն է: Ընդունելի է առաջինը:

Շ-ն Աճառյանը կապում է պահլավական շ-ի հետ, Ա. Աբրահամյանը, Ինչպես և Գարդտհաուզենը, Մեննիշյանը և Մալխասյանը՝ հունարեն շ-ի հետ⁶. յուրաքանչյուրին նման է որոշ չափով միայն. ավելի հարմար է երկուսից հանած մի նոր տառ համարել:

Չ-ն ըստ Աճառյանի՝ հայկական Զ-ից, ըստ Ա. Աբրահամյանի՝ հայկական Ո-ից. հայկական Ո-ից ուղղակի կերպով այդ ձևը դժվար է հանել. թեև Զ-ին

⁵ Նույն գրույթի մեջ հայտնեց, որ իր կարծիքով Խ-ն էլ կազմել է Ի-ից, Վ-ն՝ Ս-ից. Բ-ն՝ Տ-ից, ուստի և այս տառերի մասին նրա այդ կարծիքն ենք հիշում:

⁶ Թուրք դեպքերում այլ հնդկականների կարծիքները բերում ենք ըստ Հ. Աճառյանի հիշյալ աշխատության:

որոշ չափով նման է, բայց այբուբենի մեջ նրանից հետո չէ: Պետք է կապել հայկական Ո-ի հետ՝ ընդհանուր նախատիպով, այն է՝ հունական Օ. ձախ կողմից շրջանակը բացվել է և տակից թեք գիծ է քաշվել (2):

Ջ-ն ըստ Աճառյանի և Մյուլլերի՝ Ավեստայի Ջ հնչվող տառից, որին որոշ չափով նման է մեր Ջ-ն, ըստ Աբրահամյանի՝ հունական koppa-ից (90-ի նշանագիրը), որին բոլորովին նման չէ:

Ռ-ն ըստ Աճառյանի՝ սասանյան ղ տառից, որ արտահայտում էր երկու հնչյուն (ը, վ). Տաղավարյանը և Մարկվարտը, ինչպես և Ա. Աբրահամյանը՝ կազմված են համարում երկու Ր-երի միացումից: Ընդունելի է երկրորդը:

Վ-ն ըստ Աճառյանի՝ հայկական Ս-ից՝ աջակողմյան ստորին թևի հավելումով, ըստ Աբրահամյանի՝ հունական ν-ից. ընդունելի է առաջինը, որ ապացուցվում է նաև այբուբենի մեջ գրված տեղով:

Յ-ն ըստ Աճառյանի՝ հայերեն Ծ-ից, ըստ Աբրահամյանի՝ հունական sampl-ից (900-ի նշանագիրը), որին նման չէ. Կոպպը և Հարությունյանը կապում են եթովպական Ջ-ի, իսկ Սարգսյանը, Տաղավարյանը և Մարկվարտը՝ ասորական Յ-ի հետ, որոնք երկուսն էլ արտասանվել են ծ: Ավելի հավանական է Մեսրոպի ինքնուրույն կերպով հորինած տառ համարել:

Այս խիստ համառոտ քննությունը ցույց է տալիս, որ Մեսրոպն, իրոք, իր օգտագործած այբուբենները դիտել է որպես ելակետ, և իր այբուբենի տառերը հորինել է վերը թվարկած սկզբունքներով: Այդ տեսակետից առավել կարևոր են այն տառերը, որոնց համապատասխանները չկային հունարենում. Մեսրոպն, իբրև կանոն, դրանք ձևել է իր հորինած հայերեն տառերից. այդ ձևով հորինված տառերն են. դ, բ, ժ, լ, էս, չ, ո, վ:

Հետաքրքիր հարց է այն, թե ինչ սկզբունքով է դասավորել Մեսրոպը այն տառերը, որոնք չկային հունարենում, ըստ որում, մյուս տառերի դասավորությունը համապատասխանում է հունականին: Տեսականորեն կարելի է առաջարկել այդ տառերի դասավորության չորս կարգ. ա) բոլոր այն տառերը, որոնք չկային հունականում, միասին դասավորել այբուբենի սկզբում՝ պատահական, քմահաճ հաջորդականությամբ. սա, իհարկե, բացառվում էր Մեսրոպին ծանոթ այբուբենների ստեղծած ավանդությամբ, ըստ որում դրանք բոլորն էլ սկսվում էին ա-ով. բ) նույն ձևով, այբուբենի վերջում. այսպես են դասավորվել, օրինակ, վրացական այբուբենի այն տառերը, որոնք չկան հունարենում. բացառություն են կազմում միայն երեք տառ, որոնք դասավորված են այբուբենի մեջ, բայց դրանք էլ, ինչպես ցույց են տվել մասնագետները, բռնում են հունարենի շօտագործված տառերի տեղը. գ) նույն ձևով՝ այբուբենի մեջ, որևէ տեղում. դ) այբուբենի ներսում՝ իրարից հեռու, խառնիխուռն կերպով, այլևայլ տառերի միջև: Դրանցից ո՞րն է ընտրել Մեսրոպը: Առաջին հայացքից թվում է, թե ընտրել է չորրորդը, որովհետև հունարենում չեղած տառերը, ինչպես որ գտնում ենք մեր այբուբենի մեջ, որևէ կարգի ենթարկված չեն: Սակայն իրականում բոլորովին էլ այդպես չէ: Մեսրոպն այդ տառերի դասավորությունը հիշյալ չորս եղանակներից ոչ մեկի համաձայն էլ չի կատարել. նա դասավորել է այդ տառերը մի բոլորովին այլ եղանակով: Մեր դոկտորական դիսերտացիայի մեջ, 1944 թվականին, անդրադառնալով այդ հարցին, մենք գրել ենք. «հունարենում, պահլավերենում կամ ասորերենում չեղած տառերը Մեսրոպը հորինել է մյուս տառերի ձևափոխությամբ և զետեղել է մեր այբուբենի այն տառերից հետո, որոնց նմանությամբ հորինել է այդ

էլ բացատրում են այդ արդեն նկատի ունենալով հայերենը: Դիոնիսիոսի քերականության մեջ գրված է. «Եւ առաջագիր ձայնաւորք են վեց. ա, ե, է, ը, ի, ո... Եւ ստորագասք են երկու. ի, ւ»⁸: Բացատրելով այդ սահմանումը, Դավիթը գրում է. «Իսկ առաջագիրքն ոչ առ բաղաձայնս են, քան եթե առ ձայնաւորսն, քանզի այլ ձայնաւորքն կարեն ինիդ և հինիդ առաջագիր լիսել, իսկ դոքա ոչ ևս»⁹: Այդպիսի դասակարգումը, ինչպես հայտնի է, հունարենում հիմնոված էր երկբարբառների դրույթյան վրա, ըստ որում հունարենն ուներ միայն թուլացող (իջնող) երկբարբառներ, որոնց մեջ առաջին ձայնավորը վանկարարն էր. ոչ վանկարար ձայնավորը կարող էր լինել ւ կամ յ: Մեր մեկնիչները, իհարկե, ճիշտ են ըմբռնում և բացատրում այդ, բայց այստեղ էլ դեռ կառչած են մնում հունարեն բնագրին: Իսկ Մեսրոպը, որ հենց գիրն ստեղծելու համար ավելի լավ էր ուսումնասիրել հայերենի առանձնահատկությունները, կարողացել էր ինքնուրույն կերպով լուծել այդ հարցը: Մեսրոպն իր ալբուրների ձայնավորանիշ տառերի գործածության համար ուրիշ սկզբունքից է ելել. հայերենն ուներ և թուլացող, և ուժգնացող երկբարբառներ, ուստի և առաջագիր ձայնավորը միշտ չէր, որ վանկարար կարող էր լինել: Այդ պատճառով էլ նա ձայնավորների վանկարար-ոչ վանկարար լիսելուն համապատասխան է բաժանե տառերը: Երկբարբառների մեջ միշտ որպես վանկարար են հանդես գալիս ա, ո, ի տառերը (այ, աւ, ոյ, իւ), միշտ որպես ոչ վանկարար են լինում ւ, ու, յ տառերը և վանկարարի ու ոչ վանկարարի դերում է հանդես գալիս ե-ն. ը-ով երկբարբառ չկա: Այս դասակարգումը մեսրոպյան ուղղագրության հիմքն է կազմում: Այսպես, քանի որ ի-ն, որպես ձայնավոր հնչյուն կարող է և՛ երկբարբառի վանկարարը լինել, և՛ ոչ վանկարարը, իսկ որպես տառ, միշտ վանկարար է ներկայացնում, ապա՝ ոչ վանկարար ը-ն գրության մեջ փոխարինվում է յ-ով՝ թուլացող երկբարբառների մեջ (այ, ոյ) և ե-ով՝ ուժգնացող երկբարբառի (և եռաբարբառի) մեջ. այսպիսով, ստացվում էին՝ ա-ի > այ, ո-ի > ու, ե-ի > եյ > է թուլացող երկբարբառները, որոնց մեջ ի-ն վանկարար չէր և գրվում էր յ-ով, եա երկբարբառն ու եայ եռաբարբառը, որոնց մեջ վանկարարից առաջ ի ոչ վանկարարը գրվում էր ե-ով, և իւ, ուի երկբարբառները, որոնց մեջ ի-ն վանկարար էր: Կարելի է հարց տալ, թե ինչու Մեսրոպը մեկ հնչյունի համար այդ երեք տառերն է գործածում: Պատասխանը շատ պարզ է. հին հայերենի ի հնչույթը երեք ենթահնչույթ էր ներկայացնում՝ ձայնավոր, ձայնորդ՝ երկբարբառի բաղադրիչ և բաղաձայն: Մեսրոպյան ալբուրենում ի տառը միայն ձայնավորն է ներկայացնում, իսկ մյուս երկուսի համար կա յ տառը. բայց սա էլ ուժգնացող երկբարբառի մեջ (եա) փոխարինված է ե-ով: Այստեղ էլ Մեսրոպը շատ տրամաբանական մոտեցում է ունեցել. նա չի գրել յ, որովհետև ձայնավորներից առաջ դա ներկայացնում էր բաղաձայն ձայնորդ Յ-ն (օր. յաղագս, տղայի, աղայաք ևն). չի գրել ի, որովհետև սա էլ կարդացվում էր իբրև վանկարար (օր. միակ, միութիւն, թիոց ևն). մնում էր, ուրեմն, որևէ այլ միջոցի դիմել, և նա վերցրեց ե-ն, որովհետև ձայնավորներից առաջ նա երբեք չի հանդիպում: Նույն ձևով է վարվել Մեսրոպը նաև ու-ի նկատմամբ. այս հնչույթը նույնպես ներկայացնում

⁸ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 5:

⁹ Նույն տեղում, էջ 94—95:

էլ բացատրում են այդ արդեն նկատի ունենալով հայերենը: Դիոնիսիոսի քերականության մեջ գրված է. «Եւ առաջագիր ձայնաւորք են վեց. ա, ե, է, ը, ի, ո... Եւ ստորագասք են երկու. ի, ւ»⁸: Բացատրելով այդ սահմանումը, Դավիթը գրում է. «Իսկ առաջագիրքն ոչ առ բաղաձայնս են, քան եթե առ ձայնաւորսն, քանզի այլ ձայնաւորքն կարեն ինիդ և հինիդ առաջագիր լիսել, իսկ դոքա ոչ ևս»⁹: Այդպիսի դասակարգումը, ինչպես հայտնի է, հունարենում հիմնարկված էր երկբարբառների գրության վրա, ըստ որում հունարենն ուներ միայն թուլացող (իջնող) երկբարբառներ, որոնց մեջ առաջին ձայնավորը վանկարարն էր. ոչ վանկարար ձայնավորը կարող էր լինել և կամ չ: Մեր մեկնիչները իհարկե, ճիշտ են ըմբռնում և բացատրում այդ, բայց այստեղ էլ դեռ կառչած են մնում հունարեն բնագրին: Իսկ Մեսրոպը, որ հենց գիրն ստեղծելու համար ավելի լավ էր ուսումնասիրել հայերենի առանձնահատկությունները, կարողացել էր ինքնուրույն կերպով լուծել այդ հարցը: Մեսրոպն իր ալբուրների ձայնավորանիշ տառերի գործածության համար ուրիշ սկզբունքից է ելել. հայերենն ուներ և թուլացող, և ուժգնացող երկբարբառներ, ուստի և առաջագիր ձայնավորը միշտ չէր, որ վանկարար կարող էր լինել: Այդ պատճառով էլ նա ձայնավորների վանկարար-ոչ վանկարար լիսելուն համապատասխան է բաժանել տառերը: Երկբարբառների մեջ միշտ որպես վանկարար են հանդես գալիս ա, ո, ի տառերը (այ, աւ, ոյ, իւ), միշտ որպես ոչ վանկարար են լինում յ, ու, չ տառերը և վանկարարի ու ոչ վանկարարի դերում է հանդես գալիս ե-ն. ը-ով երկբարբառ չկա: Այս դասակարգումը մեսրոպյան ուղղագրության հիմքն է կազմում: Այսպես, քանի որ ի-ն, որպես ձայնավոր հնչյուն կարող է և՛ երկբարբառի վանկարարը լինել, և՛ ոչ վանկարարը, իսկ որպես տառ, միշտ վանկարար է ներկայացնում, ապա՝ ոչ վանկարար ը-ն գրության մեջ փոխարինվում է չ-ով՝ թուլացող երկբարբառների մեջ (այ, ոյ) և ե-ով՝ ուժգնացող երկբարբառի (և եռաբարբառի) մեջ. այսպիսով, ստացվում էին՝ ա-ի > ալ, ո-ի > ու, ե-ի > եւ > է թուլացող երկբարբառները, որոնց մեջ ի-ն վանկարար չէր և դրվում էր չ-ով, եւ երկբարբառն ու եւլ եռաբարբառը, որոնց մեջ վանկարարից առաջ ի ոչ վանկարար գրվում էր ե-ով, և իւ, ուի երկբարբառները, որոնց մեջ ի-ն վանկարար էր: Կարելի է հարց տալ, թե ինչու Մեսրոպը մեկ հնչյունի համար այդ երեք տառերն է գործածում: Պատասխանը շատ պարզ է. հին հայերենի ի հնչույթը երեք ենթահնչույթ էր ներկայացնում՝ ձայնավոր, ձայնորդ՝ երկբարբառի բաղադրիչ և բաղաձայն: Մեսրոպյան ալբուրենում ի տառը միայն ձայնավորն է ներկայացնում, իսկ մյուս երկուսի համար կա չ տառը. բայց սա էլ ուժգնացող երկբարբառի մեջ (եւ) փոխարինված է ե-ով: Այստեղ էլ Մեսրոպը շատ տրամաբանական մոտեցում է ունեցել. նա չի գրել ի, որովհետեւ ձայնավորներից առաջ դա ներկայացնում էր բաղաձայն ձայնորդ Յ-ն (օր. յաղագս, տղայի, աղայաք ևն). չի գրել ի, որովհետեւ սա էլ կարդացվում էր իբրեւ վանկարար (օր. միակ, միութիւն, թիոց ևն). մնում էր, ուրեմն, որեւէ այլ միջոցի դիմել, և նա վերցրեց ե-ն, որովհետեւ ձայնավորներից առաջ նա երբեք չի հանդիպում: Նույն ձևով է վարվել Մեսրոպը նաև ու-ի նկատմամբ. այս հնչույթը նույնպես ներկայացնում

⁸ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 5:

⁹ Նույն տեղում, էջ 94—95:

է երեք ենթահնչույթ, այն է՝ ձայնավոր, երկբարբառի ոչ վանկարար բաղադրիչ և բաղաձայն. իբրև բաղաձայն մեսրոպյան այբուբենում ներկայացված է երկու տառով՝ վ և Վ. առաջինը դործածվում է միայն բառասկզբում և ու-ից հետո, երկրորդը՝ բառամիջում, երկու ձայնավորների միջև և բառավերջում՝ ձայնավորից հետո (աւազ, թաւ), որպես վանկարար ներկայացված է ու-ով (տուն, դու ևն). իբրև երկբարբառի ոչ վանկարար բաղադրիչ ներկայացված է ու և Վ տառերով, առաջինը ուժղնացող (ուա, ուի ևն), երկրորդը՝ թուլացող երկբարբառների համար (աւ, ևւ, իւ): Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, Մեսրոպը որոշակի սկզբունք է ունեցել. տարօրինակ շեղում է ներկայացնում միայն ի վերջավորվող բառերի հոլովման մեջ երևան եկող Վ տառը. իր սկզբունքից ելնելով, Մեսրոպն այստեղ էլ պետք է գրեր ու (որդուոյ, քագուհուոյ), և ոչ թե՛ որդուոյ, քագուհուոյ): Ուրիշ դեպքերում նա հենց այդպես էլ վարվել է. այսպես՝ ունենք պատիւ, բայց պատուական, անիւ, բայց անուոյ և այլն, ինչո՞ւ, ուրեմն, այդտեղ էլ նույն կանոնը չի կիրառել: Այդ բանը կարելի է բացատրել երկու ձևով. ա) կարելի է ենթադրել, թե Մեսրոպի ժամանակ որդուոյ և նման ձևերում արտասանվել է ը ձայնավորը (որդուոյ) և այդ պատճառով էլ նա ընդհանուր կանոնի համաձայն (ձայնավորների միջև՝ Վ) գրել է Վ. այս բացատրությունը հավանական չէ. դիտենք, որ հինգերորդ—վեցերորդ դարերում որդուոյ և նման հոլովական ձևերի մեջ Վ-ն հաճախ ընկնում է. եթե ը ձայնավոր հենարանը լիներ, այդ անկումը այդքան վաղ տեղի չպիտի ունենար: Բ) Այդ կարգի բառերը տարբերվում էին պատիւ, անիւ և նման բառերից նրանով, որ ուղղականում Վ չունեին. Մեսրոպը այս վերջինների պատուական, անուոյ և այլ ձևերում տեսնում էր ուղղականի Վ-ն, իսկ որդի, այգի և նման բառերի ուղղականում դա չկար. սրանից Մեսրոպը եզրակացնում էր, թե այս բառերի հոլովաձևերի մեջ տղամորթապես վերջավորություն է, Վ-ն էլ, հետևաբար, վերջավորությանն է պատկանում. այս պատճառով էլ նա այս դեպքում գրեց Վ, որպեսզի տարբերի առաջիններից, որոնց մեջ Վ>ու-ն վերջավորությանը չէր պատկանում:

Մասնավոր ուղղագրական կանոն է այն, որ յ և Վ ձայնորդներից հետո միշտ գրվել է դ և ոչ մի դեպքում՝ Վ (դայդ, այդ, շիւղ ևն). հետագայում այս կանոնը խախտվել է հնչյունափոխական երևույթների համապատասխան:

Կարևոր հարց է մեսրոպյան այբուբենի Վ և Ն տառերի ուղղագրությունը. ինչպես դիտենք, ավանդական ուղղագրության համաձայն հետևյալ կանոններն են ընդունված. բառասկզբում Վ կարող են ունենալ միայն միավանկ բառերը (լջ, լւ ևն), ըստ որում ածանցման կամ բարդության ժամանակ նա դառնում էր ի (էջ—իջանել). Ն կարող է լինել թե՛ միավանկ, և թե՛ բաղմավանկ բառերի սկզբում. բարդության և ածանցման դեպքում նա անփոփոխ է մնում. բառամիջում Վ կարող է լինել կամ միավանկ բառերի մեջ, կամ էլ բաղմավանկ բառերի միայն վերջին վանկում (գլտ, պարտւղ): Քանի որ գրերի ստեղծման ժամանակ Վ և Ն տառերի արտասանությունը որոշակիորեն տարբեր էր, ապա այդ կանոնները հիմնված էին արտասանության վրա և որևէ դժվարություն չէին առաջացնում գրության մեջ: Իսկ ավանկ բառերի վերջում և ձայնավորներից առաջ միշտ լինում է Վ (գրլաւ, բազլ ևն): Հին ձեռագրերի մեջ այս կանոնը խախտված է. հատկապես ձայնավորներից առաջ, բայց անցյալ անկատարում, ունենք Ն: Հենվելով դրա վրա, Մեյլին այն կարծիքն է հայտ-

նում¹⁰, թե բայի անկատարի հնագույն ձևում եղել է և (եի, եիր, դրեաք ևն)։ մենք գտնում ենք, որ դա ճիշտ չէ։ Մեր հին ձևագրերում, իրոք, ունենք է և և տառերի գործածության շփոթում։ Աղաթանգեղոսի կրկնագրում, օրինակ, ունենք մի կողմից եիր, հարցանեին, գիտեալ և այլն (և փխ. է), իսկ մյուս կողմից էլ՝ կէցէ, մէնակոխ, մէնամարտիկ և այլն (է փխ. և)։ նույնիսկ Ուխտատուրի 783 թ. արձանագրության մեջ ունենք քէ (փխ. քև) և խլե (փխ. խլէ)։ Այս բոլորը ցույց են տալիս մի բան. VIII դարում և դեռ նրանից էլ առաջ է և և տառերի արտասանությունը նույնացել էր, այդ պատճառով էլ առաջացել էր այդ շփոթը։ ինչ վերաբերում է մեսրոպյան այդ տառերի ուղղագրությանը, ապա դա հիմնված էր մեր հիշած կանոնների վրա և այս դեպքում, այդ ավանդական գրությունը ճշտորեն արտացոլում է մեսրոպյան ուղղագրությունը։ Իբրև ապացույց կարելի է բերել հետևյալ փաստարկները։ հին հայերենում բաղմավանկ բառերը կարող էին վերջավորվել կամ բաղաձայնով, կամ ձայնորդով կամ ի, ու ձայնավորով. սա նշանակում է, թե ե-ով էլ չէին կարող վերջավորվել։ այդ պատճառով էլ բառավերջում ունենք է, (— եյ)։ Երկու ձայնավորների հանդիպման ժամանակ կամ նրանց մեջ ավելանում էր յ՝ հորանջից խուսափելու համար կամ էլ նախորդ ձայնավորը վերածվում էր ոչ վանկարարի (առու—առուակ, որդի—որդեակ)։ միավանկ բառերի վերջահանգ ի-ն պահպանվում էր, բայց նրանից հետո յ չէր գրվում։ քանի որ ե-ից հետո յ լսվում էր, որովհետև գործնալ և նման ձևերում եա-ն երկբարբառ չէր, ապա ձայնավորից առաջ պետք է գրվեր է (< եյ)։ վերջապես, այն փաստը, որ էի, էիր ձևերում այժմ ունենք է, և ոչ թե յե, նույնպես հաստատում է, որ այդտեղ գրվել է է։

Ուղղագրական այս բոլոր կանոնները ցույց են տալիս, որ Մեսրոպը բաղմակողմանիորեն նկատի է ունեցել մեր լեզվի արտասանական առանձնահատկությունները և բացառիկ ճշտությամբ կարողացել է որոշել տառերից յուրաքանչյուրի գործածության կանոնները, հասնելով այնպիսի արդյունքների, որոնց այժմ, գիտության զարգացման արդի մակարդակի վրա, հասնում են միայն հնչյունաբանական հատուկ փորձառական ուսումնասիրությունների հիման վրա։ Ընդունված է ասել, թե ովքեր որևէ լեզվի այբուբեն են հորինել, մեծագույն հնչյունաբաններ (ֆոնոլոգներ) են եղել։ դա ճիշտ է, իհարկե, և առավելագույն չափով վերաբերում է Մեսրոպին։ Բայց Մեսրոպ Մաշտոցը միայն հնչյունաբան չի եղել. նա եղել է իր ժամանակի մեծագույն լեզվաբանը բառիս ամենալայն առումով, մի լեզվաբան, որ հիանալի կերպով հաշվի է առել տարբեր վայրերի խոսվածքները և հստակ պատկերացում կազմել հայերենի ընդհանուր հնչյունական համակարգի մասին, որ խորապես ուսումնասիրել է մեր լեզվի քերականական կառուցվածքը և ուղղագրության կանոնները որոշելիս հիմնվել քերականական տվյալների վրա, մի պաշտամիտ գիտնական, որ ոչ միայն իր, այլև հետագա ժամանակների ամենախստագույն պահանջներին բավարարող կատարյալ այբուբեն է հորինել։ Ստեղծելով հայկական այբուբենը, Մեսրոպը դարաշրջանի անհրաժեշտությունից ելնելով, մի նպատակի էր ձգտում. գիր ու գրականության հիմքը դնել, հայկական դպրոցներ բացել, հայ պատանիներին ու երիտասարդներին հայկական կրթություն

¹⁰ A. Meillet, Esquisse d'une grammaire comparee de l'armenien classique, Vienne, 1936, p. 126.

տալ: Եվ նա հասավ իր նպատակին. այբուբենի ստեղծմանը հաջորդեց թարգմանչական գործունեության ծավալումը, հայկական դպրոցների ստեղծումը և հայ մատենագրության ծաղկումը: Դարերի ավերիչ շունչը չկարողացավ եղծել Մեսրոպի ստեղծած գիրը. իրար հաջորդող աշխարհավեր արհավիրքները՝ նվաճումները, կոտորածը, սովը, գերությունը, գաղթն ու համաճարակները, չկարողացան մարել Մեսրոպի վառած լուսավոր ջահը, նվաճողների գորքերն ու ասիմիլյատորների բոլոր բռնություններն: անգոր գտնվեցին երեսունվեց տառերի ամենահաղթ գործության առջև: Ծաղկեց հայ դպրությունը, հայի ոգորող միտքը կերտեց արվեստի ու գիտության իր անմահ կոթողները, ուսումնատենչ ու լուսաբաղձ ոգին միշտ վառ պահեց լուսավորության ջահը և մոայլ դարերի արյան ու սպանդի միջով մեր օրերին հասցրեց հայ հանճարի գանձերը: Հայ ժողովուրդը սրբագործեց Մեսրոպի ձգտումներն ու վառ պահեց ուսումնաբաղձ ու գրասեր ոգին, գոյության ահեղ կովի մեջ իր հզորագույն զենքերից մեկը դարձրեց մեսրոպյան հայկական գիրը, —

Եվ ճորտությունն անգամ այն անարև
Զխեղդեց բարբառն այս հանճարեղ, ,
Որ վտակներով բազմաբարև
Հասավ մինչև մեր օրերն այս հրե (Ե. Չարենց):

МЕСРОПОВСКИЙ АЛФАВИТ И ОРФОГРАФИЯ

Член-корр. АН Арм. ССР Э. Б. АГАЯН

(Р е з ю м е)

Созданный в начале V в. н. э. Месропом Маштоцом армянский алфавит, который употребляется без значительных изменений и поныне, отличается исключительным совершенством. Этот алфавит характеризуется: а) отсутствием дополнительных, диакритических знаков; б) соответствием буквенных знаков звукам общеармянского языка, а не какого-либо говора своего времени; в) направлением письма слева направо; г) системностью изобретенных Месропом буквенных знаков, что обусловлено в свою очередь системностью видоизменений буквенных знаков использованных им алфавитов (преческий, пехлевийский и др.); д) принципом, согласно которому каждому звуку соответствует только одна буква и каждой букве только один звук.

Анализ алфавита показывает, насколько тщательно изучил Маштоц фонетику и грамматику древнеармянского языка, в результате чего в нем в совершенстве отражаются особенности грабара. Это в особенности проявляется в принятых Месропом орфографических правилах.

В данной статье исследуются эти правила и их научная ценность. Месроп Маштоц был не только великим фонологом, но и великим лингвистом своего времени, глубоко изучившим древнеармянский язык и его говоры, его фонетические, лексикологические и грамматические особенности.